ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 հուլիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ռ. Պապայանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գյուշիխտա Նուրիջանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գյուշիխտա Նուրիջանյանը 2010թ. հուլիսի 13-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 8-րդ և 31-րդ հոդվածների պահաջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ սույն դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողը ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմողը փորձել է դատական ակտերի իրա-

վական հեպեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին:

Բացի դրանից, դպական կազմն արձանագրում է, որ սույն դիմումում բերված չեն անհրաժեշտ եւ բավարար իրավական փաստարկներ՝ վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորելու համար /ՀՀ սահմանադրական դպարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Դիմողը պատշաճ չի հիմնավորել նաեւ իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթի միջեւ պատճառահետեւանքային կապի անմիջական առկայությունը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դպարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դպարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դպարանի թիվ 2 դպական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գյուչիխպա Նուրիջանյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

23 հուլիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-24